

տութեան ծառայն : Միթէ կարելի՞ է այդպիսի հանգամանաց մէջ, մինչդեռ ամենայն կէտեր եւ տեղեկութիւնք կատարեալ կերպով կը միաբանին իրերաց հետ, տարակուսիլ անոր հեղինակութեան վրայ : Յիշատի միտեալու համար զայս՝ աւելի ապացոյցներ պէտք պիտի ըլլան՝ քան թէ լոկ աւանդութիւնն ինքնին : Արդ կը ճանաչեմք հասուն պտուղը, կը ճանաչեմք ծառը՝ որ ըստ աւանդութեան արտադրեց զայն, տեսնենք թէ իւր բնադրոշմն կը ցուցնե՞ իւր ծագումը : Բայց նախ եւ առաջ՝ աւանդութիւնը կ'ուզէ ապացուցանել իւր օրինաւորութիւնը : « Եւրեքսասաներորդ դարուն մէջ կիրակոս պատմիչ կ'ակնարկէ հաբեւանցի կերպով Եզնըկայ մատենագրական գործօնէն » իւր « Եզնիկ թողուց բազմաթիւ ճառեր յօգտու իւր ունկնդրաց » , « մինչդեռ այս պատմիչը մեզ շատ մի մանրամասն տեղեկութիւններ կուտայ հինգերորդ դարու միւս զրջաց վրայ : Այս ճառերուն մէջ պէտք է իմացուի նաեւ Եզնիկ աղանդոցը, վասն զի Եզնիկ անոր մէջ յայտնի կերպով կը խօսի Նպաստ իւր ունկնդրաց » : Նա ճշտ կը կոչէ նաեւ անոր գործոյն զխաւոր մասերը : Ֆեստեր՝ կիրակոսի այս իրեն յառջ բերած խօսքին վրայ կը նկատէ . « Այս տեղեկութիւն տալու կերպն նորօրինակ է : Թուի թէ միջին դարու Հայաստանի ազգային հայրենասիրութիւնն ունեցած չէ նայն շահը եւ նոյն խելամուռութիւնը Եզնիկայ հայեցողական բանակութեանց վրայ » ինչ որ ունեցած է Մովսիսի եւ Եղիշէի ազգային մեծ պատմաց գործերուն վրայ » : Միւրեք կը կարծենք թէ տեղեկութեան կերպին եւ Եզնիկայ գործոյն նուազ հետաքրքրուելու եւ անոր անբաւական հասկացողութեան նշանակաց մէջ՝ պէտք է ճանաչել յայտարար նշան մը աւանդութեան անարատութեան : Խաղաղեալ նմանութիւնք եւ յաւելումք կը նախադասեն շահը, եւ սովոր են ծանուցուիլ այն անուամբ՝ որուն կ'ընծայուին փառքք : Ինչպէս օրինակի համար

Ստոյն Դիոնիսեայ Արիսպագացոյն եւ Ստոյն Կղեմայ գրուածքներն :

Շարայարեյի

## ՄԻ ԶԱՅՆ ԿՈՎԿԱՍՏԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԹԻՖԼԻՍԻՄ ԵՐԿԻՆ ԳՐԱՆ ՀԱՅԿԿԱՆ մեծ (որքան կը ներուի, միջոցներին նայած) գրադարան կայ, սակայն այդ երկու գրադարաններուն էլ չի գտնուի այն բոլոր հայ սակաւաթիւ թերթերը (ընթերցարանի վերաբերմամբ է խօսքս), որոնք հրատարակուած են թէ՛ Ռուսաստանում եթէ՛ արտասահմանում : Այդ երկու գրադարաններից մէկը Կովկ. Հ. Բ. Ընկերութեանն է, իսկ միւսը « Էմանուէլի գրադարանն է », որը ահա տանք տարի է ինչ գոյութիւն ունի, իսկ Բարեգ. Ընկ. Գրադարանը 3 տարի է :

Խօսքը չ'երկարացնելու համար, յայտնում եմ, որ այդ Էմանուէլի Գրադարանը ունի եւ Ընթերցարան, իսկ այդտեղ չը կայ եւ չի էլ օտարուած Բազմութեան, թէ ինչու, այդ հարցին պատասխանել են՝ որ Գրադարանի միջոցները չեն ներում օտարալու եւ այդ թերթը : Անտես չը պիտի առնել թիֆլիսի այս խեղճ Գրադարանի վիճակը : Պարտաւորեցուցիչ է մեզ համար որ անպատճառ պահպանենք գոնէ մեր հաստատութիւնները, մեր խեղճ գրադարանները, հետեւապէս հարկատու է գրա առաջն առնելու համար, բանիմաց մարդկանց ուշադրութիւնը դարձնել եւ հոգալ այդ գրադարանների մասին, գոնէ եթէ ոչ գրամական միջոցներով, գէթ ընծայ ուղարկելով այս կամ այն թերթը, որով եւ միջոց կ'ունենայ նա (Գրադարանը) գոհացումն տալ իր աղքատիկ ընթերցողներին պահանջներին :

Աւարտելով (N.º 11-12, 97 թ.) իմանում ենք՝ որ մի շատ լաւ տեսակի բարերարու

1. Ներք. անդ. Գ. 252 :

2. Տ. անդ. Ա. 5, էջ 22 :

թիւն է անում մի անձ, և գովելի է այդ պարոնի եռանդը, որ մեր աղքատիկ գրա-կանութիւնը աւելի և աւելի ծաղկեցնելու համար, գրամական միջոցներ է գրել Վեհա-փառ Հայրապետի տնօրինութեան ներքոյ, հրատարակելու ժողովրդական ընթերցանելի գրքեր և կամ քարոզներ աշխարհաբար լեզ-ւով, հասարակ դատակարգին մատչելի և արժան լինելու համար:

Առանձնակի շնորհակալութիւն պիտի յայտ-նել այդ վեհանձն մարզուն, որ զրականու-թեան մասին այնքան լայն և մեծ գաղա-փար ունի: Ուրեմն հարկաւոր և պարտաւո-րեցողիչ է միւս ազգայնոց էլ այդ բարի մարզուց օրինակ առնել, և գրքի կամ լրա-գրի (որքան փայլուն բան, եթէ իրագործուի մեր սրտի փափագածները) ընծաներ բաժա-նել այս և այն հաստատութիւններին:

Եթէ այգպիսի մէկը լինի՝ խորհուրդ կը տալինք նախ և առաջ թիֆլիսի Էմանուէլի Գրադարանին նուէր տար Բաշմէշ և թիֆլի-սում հրատարակուող գեղարուեստական եր-կու թերթեր Աշէ-է և Տաշ-է:

Տեսնելով այս գրութիւնը հայկական գրա-դարանների վերաբերմամբ, պիտի իւրաքան-չիւր մարզու սրբազան պարտականոքիանը լինի օգնելու դրանց. բայց այդ պարտա-կանութիւնը որքան անգամ աւուել է, հրա-պարակի վրայ մեծ դեր է խաղացել, օտկայն միշտ մնացել է անտես, անլսելի...

Վերջապէս արթնացէր ո՞վ հայեր, մի րոպէ գտնէ յետ նայեցէք և տեսէք թէ ձեր շուրջը ի՞նչ է կատարում, որ խնայում էք ձեր «բազում անշնորհ» կոպէլները:

Միշտ առաջ տանողը ո՞վ է, ո՞վ, եթէ ոչ մամուլը, զրականութիւնը \*...

ՀԱՅՐ. ԲԱՐՈՒՐԵԱՆՑ

Թիֆլիս, 5 փետր. 1898.

## ՍՈՒՐԷԱՆԳԱՆԻԹԻՒՆ ՅԱՆԵՆԱՅԼ ԱՇԽԱՐՀԻ

### ՆՈՐ ՀԱՐՑՄԱՌՆԵՐ


#### 1. ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՆԵՆԱՅԼ ԱՇԽԱՐՀԻ

Առ հասարակ ազգային թէ լրագիրք և թէ պարբերական համդէպ, հայ գաղթադաւանութեամ վրայօք, զանազան անգամ յօդուածներ և խմբագրականներ հրատարակեցին. սոյն յօ-դուածագիրք, — ինչպէս ծանօթ է արդէն ըն-թերցող հասարակութեամ, — ընդհանրապէս գաղթականութեամ տխուր կողմերը շօշափեցիմ կամ լաւ եւս ըսել շեշտեցին. և մասնաւոր թէ ամենայն ճգամը աշխատեցան համոզել որ մեր բնակչութիւնը ժողովուրդը իրեն սեփական հայ-րենիքէն չհեռանայ, և թէ՛ որոնք որ պարա-գային տխուր բերմամբ գաղթած էին գտար աշխարհներ՝ հրաւէր կարդացին վերստին իրենց բնավայրը դառնալ: — Այդ սոյն առիթէն օ-գուտ քաղելով՝ Բազմավիպի միջոցով կը փա-փաքէի հետեւեալ հարցումն ընել.

ա. Արդեօք մեր ազգի՞ յարմարելով պարա-րագային և կամ քաղղին բերմամ պէտք է գաղ-թել օտար աշխարհ թէ ոչ:

բ. Արդեօք միշտ վնասակար եղած է գաղ-թականութիւնը. և կամ թէ ոչ, ի՞նչ օգուտներ յառաջ բերած է:

Ահաւասիկ հարցում մը, որում կարեւորու-թիւնը ամփոփելի է կարծեմ, ուստի չեմ կարծեր որ խմբագրական սապատին արժանանայ:



\* Միւս Թղթակցութեան մէջ կը խօսիմ թիֆլիսում եղած «Արքունական ժողովրդա-կան գրադարանի», գրքերի, ցուցակների մա-սին, և այլն...